600.0272.24.07.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

24 հուլիսի 2019 թվականի №272
ք.Երևան

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-Ի №178Ա ՈՐՈՇՄԱՆ

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը 2019 թվականի հուլիսի 2-ին Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է ներկայացրել Հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 5-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության սակագնային մարժայի հաշվարկում ներառվող էլեկտրաէներգիայի թույլատրելի կորուստների մեծությունները սահմանելու մասին» №178Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) վերաբերյալ պաշտոնական պարզաբանում ստանալու մասին դիմում՝ մասնավորապես հետևյալ հարցի կապակցությամբ.

«Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2013 թվականի հունիսի 5-ի №178Ա որոշմամբ սահմանված թույլատրելի կորուստի մեծությունը հաշվարկելիս տարածվո՞ւմ է հաղորդման ցանց մուտք գործող ամբողջ քանակի վրա՝ անկախ վաճառքի նպատակից (ներքին շուկայի կարիքներ կամ արտահանում)»:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունն առաջարկել է Որոշման պարզաբանման հետևյալ տարբերակը.

«Սահմանված թույլատրելի կորուստի մեծությունը կիրառվում է հաղորդման ցանց մուտք եղած ամբողջ քանակի վրա՝ առանց նվազեցնելու արտահանման նպատակով վաճառված քանակը»:

Հաշվի առնելով, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության պնդմամբ, Որոշումը ոչ հստակ է, կարող է տարաբնույթ ընկալումների տեղիք

տալ և Որոշմամբ սահմանված հաղորդման ցանցում առաջացող թույլատրելի կորուստի մեծության կիրառումը ունի ֆինանսական և հարկային հետևանքներ, ինչպես նաև այն, որ առաջացած հարցերը ենթակա են հստակեցման, Հանձնաժողովը գտնում է, որ առկա է Որոշումը պաշտոնապես պարզաբանելու՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 42-րդ հոդվածով նախատեսված հիմքը:

Այսպես, Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանվել են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության սակագնային մարժայի հաշվարկում ներառվող սպառողների էլեկտրամատակարարման ապահովման համար հաղորդման ցանց մուտք գործող էլեկտրական էներգիայի թույլատրելի կորուստի մեծությունները՝ համապատասխան ժամանակահատվածների համար:

Նշված կարգավորման շրջանակում անհրաժեշտ է նշել, որ հաշվառման նպատակով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից արտադրող խոշոր կայաններից (30 ՄՎտ և ավելի տեղակայված հզորություն ունեցող էլեկտրակայաններ) ձեռք բերված էլեկտրական էներգիան համարվում է ամբողջությամբ հաղորդման ցանց մուտք գործած և, անկախ այդ էլեկտրական էներգիան տվյալ հաշվարկային ժամանակահատվածում (ամսում) ներքին շուկայի սպառողներին մատակարարելու կամ դրա մի մասը փոխհոսքերի շրջանակում այլ երկրներ առաքելու նպատակով այլ անձանց վաճառելու հանգամանքից, հաղորդման ցանցով այդ էլեկտրական էներգիայի հաղորդման ընթացքում տեղի է ունենում դրա փաստացի կորուստ, որի համար վճարում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը:

Միևնույն ժամանակ, արտադրող խոշոր կայաններից (30 ՄՎտ և ավելի տեղակայված հզորություն ունեցող էլեկտրակայաններ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից ձեռք բերված էլեկտրական էներգիան նույնիսկ, եթե տվյալ հաշվարկային ժամանակահատվածում (ամսում) ամբողջությամբ չի սպառվում ներքին շուկայի սպառողների կողմից և դրա մի մասը փոխհոսքերի շրջանակում առաքվում է այլ երկրներ, միևնույնն է, այն հետագա ժամանակահատվածներում (ամիսներում) փոխհոսքերի շրջանակում ներկրվում է այլ երկրներից և վերջնական արդյունքում սպառվում ներքին շուկայի սպառողների կողմից:

Հաշվի առնելով վերոշարադրյալը և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-44-րդ հոդվածները՝ Հանձնաժողովը

Պաշտոնապես պարզաբանում է.

Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության սակագնային մարժայի հաշվարկում ներառվող սպառողների էլեկտրամատակարարման ապահովման համար հաղորդման ցանց մուտք գործող էլեկտրական էներգիայի թույլատրելի կորուստի մեծությունները հաշվարկվում են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից գնվող և հաղորդման ցանց մուտք գործող էլեկտրական էներգիայի ամբողջ քանակի նկատմամբ՝ ներառյալ փոխհոսքերի շրջանակում այլ երկրներ առաքելու նպատակով այլ անձանց վաճառվող էլեկտրական էներգիան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱԲԱՅԱՆ

ք. Երևան
24 հուլիսի 2019թ.